

1.3. *Գներ և սակագներ*

**Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2005թ. հունվար-մայիսին**

(ճախող ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	105.4	100.5	100.7	97.3	98.2	100.3
Փետրվար	99.3	94.8	99.9	98.9	98.4	100.6
Մարտ	99.1	101.2	122.9	98.7	99.6	98.3
Ապրիլ	99.1	97.4	99.9	98.5	97.3	103.4
Մայիս	100.1	99.9	100.0	97.4	97.6	100.6
2005թ. մայիսը 2004թ. դեկտեմբերի նկատմամբ	102.9	93.8	123.6	91.1	96.1*)	101.1*)
2005թ. հունվար-մայիսը 2004թ. հունվար մայիսի նկատմամբ	102.9	113.1	113.7	87.9	105.6	104.9

\*) 2005թ. մայիսի և 2004թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է ճախող ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողտնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏՃԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

<sup>3)</sup> Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


<sup>4)</sup> Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

<sup>6)</sup> Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

**Գների, սակագների աճի տեմպերը 2004-2005թթ. հունվար-մայիսին**


(ճախող տարվա հունվար-մայիսի նկատմամբ, %)



**Արտարժուքային շուկա:** 2005թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետության սպառողական և արժուքային շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 0.1% և 0.3% հավելաճ: Մայիսին 2004թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 2.9% հավելաճն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 7.6% նվազումով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է նմանատիպ միտում. սպառողական գների 4.7% հավելաճին զուգընթաց գրանցվել է հաշվարկային փոխարժեքի 2.2% նվազում: 2005թ. մայիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 449.25 դրամ, ինչը 18.7% ցածր է նախորդ տարվա մայիսի համապատասխան ցուցանիշից (552.66 դրամ):

**ՀՀ սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2004-2005թթ. հունվար-մայիսին**


(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



**Սպառողական գներ:** 2005թ. փետրվար-ապրիլին ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 2.5% գնանկմանը մայիսին հաջորդել է 0.1% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:

**Սպառողական գների հավելաճը 1996-2005թթ. մայիսին**

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



2005թ. հունվար-մայիսին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.6%, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից ցածր է 0.3 տոկոսային կետով (0.9%):


Սպառողական գների փոփոխությունները 2005թ. մայիսին

(%)

	2005թ.				հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ
	մայիսը				
	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ	2004թ. մայիսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս	102.9	100.1	100.3	115.1	102.9
<i>այդ թվում՝</i>					
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	104.2	100.0	100.5	121.4	104.4
ոչ պարենային ապրանքների	99.5	99.7	99.2	102.2	99.9
ծառայությունների	100.6	101.0	100.1	103.7	99.7

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2005թ. հունվար-մայիսին

(նախորդ ամսվա համեմատ, %)



**Պարենային ապրանքների գներ:** 2005թ. մայիսին ապրիլի համեմատ պարենային ապրանքների շուկայում, ընդհանուր առմամբ, գների կայուն մակարդակի պայմաններում արձանագրվել են գնային փոփոխություններ աճման և նվազման միտումով:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)


	2005թ.				հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ
	մայիսը				
	2005թ. ապրիլի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. մայիսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
<b>Պարենային ապրանքներ</b> (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100.0	104.2	100.5	121.4	104.4
<b>Պարենային ապրանքներ</b>	100.0	104.6	100.6	123.8	104.9
հացամթերք	99.2	98.4	92.7	123.8	93.7
մսամթերք	101.0	100.9	102.6	122.9	106.7
ձկնամթերք	81.3	93.7	134.0	209.9	244.8
կաթնամթերք	99.4	100.0	97.3	106.9	103.6
ձու	99.2	97.8	116.2	132.1	111.0
կենդանական և բուսական յուղ	99.3	99.6	97.6	109.4	98.7
միրգ	111.2	132.5	128.9	176.4	129.0
բանջարեղեն և կարտոֆիլ	100.3	133.9	97.1	124.8	108.9
շաքարավազ	98.9	97.4	97.7	96.4	98.8
սուրճ, թեյ, կակաո	100.3	101.5	100.5	103.7	99.7
հրուշակեղեն	100.0	100.3	103.8	107.5	103.8
այլ մթերքներ	100.2	101.0	102.8	102.6	102.2
ոչ ոգելից խմիչք	100.6	103.9	106.7	114.3	107.7
<b>Ոգելից խմիչք և ծխախոտ</b>	100.0	100.2	100.0	100.9	99.0

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2005թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում արձանագրվել է մրգի 11.2% գնաճ<sup>1</sup>: Նշված ժամանակահատվածում գրանցվել է խաղողի (4.0%), խնձորի (7.5%), ինչպես նաև ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից՝ ադամաթզի (4.3%), նարնջի (6.1%) գնաճ: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է մրգի 5.8-35.8% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Եղեգնաձորում): Մայրաքաղաքում մրգի գնաճը կազմել է 9.7%:

### Մրգի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-մայիսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)




Մասնաբերքի ապրանքախմբում 2005թ. մայիսին ապրիլի համեմատ արձանագրվել է 1.0% գնաճ, ինչը խոզի (1.7%), տավարի (1.5%) մսի գնաճի արդյունք է: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է ոչխարի մսի 0.9% գնաճ: Հանրապետության դիտարկված քաղաքներից 7-ում գրանցվել է մասնաբերքի 0.2-1.6% գնաճ, 2-ում՝ 1.0-0.1% գնանկում, իսկ ք. Կապանում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում արձանագրվել է մասնաբերքի 1.4% գնաճ:

2005թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 0.3% գնաճ, ինչը գլուխ սոխի (1.0%), սխտորի (5.3%), գազարի (8.9%), ճակնդեղի (10.0%), կաղամբի (12.3%) գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված քաղաքներից միայն Երևանում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 7.9% գնանկում, իսկ մյուս 9 քաղաքներում՝ 4.1-22.4% գնաճ, ընդ որում գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Մարտունիում:

### Բանջարեղենի և կարտոֆիլի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-մայիսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



<sup>1</sup> Ըստ գործող մեթոդաբանության, սեզոնային ապրանքների համար կատարվում է հատուկ հաշվարկ, ինչով էլ պայմանավորվում է մրգի ապրանքախմբում արձանագրված 11.2% գնաճը:

**1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

Չկանամթերքի ապրանքախմբում 2005թ. մայիսին ապրիլի համեմատ գրանցվել է 18.7% գնանկում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել է ձկնամթերքի 3.7% գնաճ), ինչը հիմնականում պայմանավորվել է թարմ «սիգ» տեսակի ձկան 21.9% գնանկումով: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում գրանցվել է ձկնամթերքի 33.3-2.2% գնանկում, ընդ որում, գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Թալիմում: Մայրաքաղաքում արձանագրվել է ձկնամթերքի 16.1% գնանկում, իսկ ք. Դիլիջանում՝ 2.3% գնաճ:

**Ոչ պարենային ապրանքների գներ:** Ոչ պարենային ապրանքների շուկայում 2005թ. մայիսին 2004թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 0.5% գնանկում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.3% գնաճ):

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները**

(%)

	2005թ.				հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ
	մայիսը				
	2005թ. ապրիլի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. մայիսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
<b>Ոչ պարենային ապրանքներ</b>	99.7	99.5	99.2	102.2	99.0
<i>այդ թվում՝</i>					
հագուստ և գործվածք	99.8	98.6	97.3	98.2	97.4
վառելիք	98.3	110.8	120.4	149.6	121.5
կահույք	97.4	95.5	88.8	86.5	90.4
գորգեղեն	99.9	99.5	97.9	101.9	98.5
տեքստիլեղեն	100.0	99.8	100.2	98.9	100.9
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.3	96.7	91.6	87.1	92.3
խոհանոցային սպասք	99.9	99.0	97.3	98.3	97.0
լվացամիջոցներ	100.0	100.2	100.5	102.7	101.0
շինանյութեր	99.6	99.5	97.8	96.6	98.0
այգեգործական ապրանքներ	100.1	101.0	103.4	109.5	103.7
դեղամիջոցներ	97.8	96.9	95.7	89.9	98.1
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	100.7	96.9	101.9	121.6	105.5
մշակույթի ապրանքներ	99.2	96.1	86.2	82.4	86.3
գրեմական պիտույքներ	100.0	100.1	101.4	101.4	101.5
զեղահարդարման ապրանքներ	100.0	100.1	100.0	102.0	100.4
ոսկերչական ապրանքներ	99.4	95.1	93.7	118.2	94.6
անձնապիտո ապրանքներ	100.0	99.1	97.3	96.5	97.6

2005թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի 1.0% գնաճ, իսկ դիզելային վառելիքի գինը նվազել է 0.4%: Մայիսին 2004թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 2.8% և 3.3% գնանկում:

**Ծառայությունների սակագներ:** 2005թ. մայիսին ապրիլի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում գրանցված սակագների 1.0% հավելաճը հիմնականում հանգստի կազմակերպման՝ 3.5% (պայմանավորված հյուրանոցային ծառայությունների սակագների 9.5% հավելաճով), տրանսպորտի ծառայությունների 2.3% (պայմանավորված օդային տրանսպորտի ծառայությունների սակագների 5.2% հավելաճով) սակագների հավելաճի արդյունք է: Բնակարանային կոմունալ ծառայությունների ոլորտում գրանցվել է 1.7% հավելաճ, ինչը 2005թ. մայիսի 1-ից հանրապետությունում խմելու ջրի և ջրահեռացման ծառայությունների սակագների 27.3% և 69.9% հավելաճի արդյունք է:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

(%)

	2005թ.				
	մայիսը				հունվար-մայիսը 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ
	2005թ. ապրիլի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. մայիսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
<b>Ծառայություններ, ընդամենը</b>	101.0	100.6	100.1	103.7	99.7
<i>այդ թվում՝</i>					
Կենցաղային	100.1	102.2	100.6	99.1	99.6
բնակարանային-կոմունալ	101.7	101.4	100.6	104.5	101.4
բուժապասարկման	100.1	99.7	100.3	98.8	98.9
տրանսպորտի	102.3	100.4	98.6	104.1	95.6
կապի	97.4	96.6	95.8	104.2	96.4
մշակույթի	94.3	96.7	109.4	147.4	117.5
կրթության համակարգի	99.9	98.8	100.1	100.8	100.6
հանգստի կազմակերպման	103.5	101.7	98.1	101.6	98.1
հանրային սննդի	100.6	100.7	105.5	113.6	106.7
իրավական և բանկային	100.5	100.5	100.5	100.5	100.1

**Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** Հանրապետությունում դիտարկված քաղաքներից միայն Երևանում 2005թ. մայիսին ապրիլի համեմատ գրանցվել է սպառողական գների 0.5% գնանկում, իսկ մյուս 9 քաղաքներում՝ 0.3-2.1% գնաճ (ամենաբարձր գնաճն արձանագրվել է ք. Կապանում):

2005թ. մայիսին ապրիլի համեմատ մայրաքաղաքում գրանցվել է պարենային ապրանքների 0.9% գնանկում, իսկ դիտարկված մյուս 9 քաղաքներում՝ 0.1-3.0% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Կապանում):

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2005թ. մայիսի 30-ի դրությամբ**

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
<b>ՀՀ, միջինը</b>	1427	1338	1622	663	560	247	183	226	209	434
<i>այդ թվում.</i>										
Երևան	1421	1354	1629	680	575	247	185	229	201	446
Գյումրի	1463	1325	1650	661	578	260	191	224	261	411
Վանաձոր	1450	1241	1520	588	590	233	178	250	193	390
Վաղարշապատ	1400	1300	1580	590	520	240	180	200	192	340
Թալին	1500	1350	1700	700	450	255	180	200	250	400
Դիլիջան	1500	1200	1700	625	550	251	150	200	200	400
Հրազդան, Չարենցավան	1500	1400	1580	635	537	242	155	200	200	460
Եղեգնաձոր	1350	1300	1650	680	500	250	150	250	250	500
Մարտունի	1300	1300	1650	675	500	250	175	250	210	500
Կապան	1400	1380	1620	672	520	262	264	238	280	408
Արտաշատ	1400	1150	1600	600	500	250	106	200	200	385

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2005թ. մայիսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6909 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Կապանում՝ 7044 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Վաղարշապատում՝ 6542 դրամ), ինչը 1.8% գերազանցել է նույնաժամանակահատվածի 2004թ. մայիսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6785 դրամ):

**1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

2005թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետության դիտարկված 4 քաղաքներում գրանցվել է ոչ պարենային ապրանքների 1.2-0.4% գնանկում (մայրաքաղաքում գնանկումը կազմել է 0.4%), 4 քաղաքներում՝ 0.1-0.5% գնաճ, իսկ Գյումրի և Դիլիջան քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2005թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.5-2.1% հավելաճ, ընդ որում, հավելաճի համեմատաբար բարձր ցուցանիշը գրանցվել է ք. Հրազդանում (Չարենցավանում): Մայրաքաղաքում ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 0.8%:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2005թ. մայիսին 2004թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի**

(%)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառման ապրանքների	պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
<b>ԳՅ, ընդամենը</b>	102.9	103.4	104.6	100.2	99.5	100.6
<i>այդ թվում՝</i>						
Երևան	103.0	103.4	104.8	100.1	99.2	100.6
Գյումրի	102.0	102.5	103.4	100.2	99.4	99.8
Վանաձոր	102.1	102.5	103.6	99.4	98.6	100.3
Վաղարշապատ	102.6	103.1	103.9	100.7	100.9	99.7
Թալին	102.2	102.7	103.4	100.0	100.8	100.0
Դիլիջան	102.5	103.0	104.1	100.8	99.0	99.8
Հրազդան, Չարենցավան	103.8	104.3	105.7	100.5	100.0	101.7
Եղեգնաձոր	102.4	102.6	103.6	100.1	99.4	101.3
Մարտունի	102.9	103.2	104.2	99.9	100.4	101.1
Կապան	104.7	105.3	106.6	102.9	101.1	101.8

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2005թ. հունվար-մայիսին Արտաշատ<sup>1</sup> քաղաքում**

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառման ապրանքների	պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
Հունվար	104.1	105.0	106.3	99.1	102.9	100.1
Փետրվար	99.5	99.2	99.2	100.1	99.1	100.6
Մարտ	98.4	98.2	97.4	103.2	99.0	99.1
Ապրիլ	99.4	99.3	98.6	103.3	100.3	100.1
Մայիս	98.9	98.6	97.9	102.4	99.5	100.3
Մայիսը 2004թ. դեկտեմբերի նկատմամբ	100.2	100.2	99.1	108.3	100.8	100.2

**Արդյունաբերողների արտադրանքի գներ:** 2005թ. մայիսին 2004թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գները հանրապետությունում նվազել են 6.2%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 8.1% գնաճի դիմաց:

<sup>1</sup> Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում) գների դիտարկումը կատարվում է 2004թ. փետրվարից սկսած:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի (%)

	2005թ.			
	մայիսը			հունվար-մայիսը 2004թ. հունվար- մայիսի նկատմամբ
	2005թ. ապրիլի նկատմամբ	2004թ. մայիսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը	99.9	108.7	148.1	113.1
<i>այդ թվում՝</i>				
էլեկտրաէներգետիկա	100.3	95.3	92.3	96.7
գունավոր մետալուրգիա	101.8	141.1	318.4	155.7
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	99.0	98.6	126.5	100.2
մեքենաշինություն	102.7	97.4	101.3	100.6
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	99.9	104.4	118.5	102.0
անտառային, փայտամշակման, թղթի-ցեյլուլոզի արդյունաբերություն	98.9	108.2	103.5	99.0
շինանյութերի արդյունաբերություն	95.3	101.1	109.4	108.6
թեթև արդյունաբերություն	90.2	101.3	105.5	106.2
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	98.1	95.2	125.3	95.0
պոլիգրաֆիական արդյունաբերություն	105.5	65.3	106.9	88.1

**Բեռնափոխադրումների սակագներ:** 2005թ. մայիսին ապրիլի համեմատ բեռնափոխադրումների սակագները հանրապետությունում նվազել են 2.6%, ինչը մեծապես պայմանավորվել է երկաթուղային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 4.1% և 3.9% նվազումով: Նշված ժամանակահատվածում ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 0.2%, իսկ օդային տրանսպորտում գրանցվել է սակագների 2.0% հավելում:


2005թ. մայիսին 2004թ. մայիսի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 83.2%, այդ թվում՝ երկաթուղային տրանսպորտով՝ 80.3%, ավտոմոբիլայինով՝ 104.7%, օդայինով՝ 81.1%, խողովակաշարային տրանսպորտով՝ 79.7%, իսկ հունվար-մայիսին նախորդ տարվա հունվար-մայիսի համեմատ՝ համապատասխանաբար 87.9%, 83.2, 107.7, 83.7, 89.0%:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գներ:** 2005թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գյուղատնտեսական մթերքի 2.4% գնանկում, ինչը մեծապես պայմանավորվել է իրացման բոլոր ուղղություններով գյուղատնտեսական մթերքի 4.6-0.1% գնանկումով:



Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում 2005թ. մայիսին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2005թ. մայիսին 2004թ. մայիսի համեմատ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 104.6%, այդ թվում, բուսաբուծական մթերքինը՝ 108.8%, անասնապահական մթերքինը՝ 103.5%, իսկ հունվար-մայիսին 2004թ. հունվար-մայիսի համեմատ՝ համապատասխանաբար 105.6%, 100.9 և 107.2%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ՀՀ-ում 2001-2005թթ. մայիսին

(դրամով)

	Չափի միավորը	2001	2002	2003	2004	2005
Ցորեն	կգ	122	129	91	177	119
Գարի	- ,, -	96	101	93	141	114
Լոբի	- ,, -	412	...	450	351	383
Կարտոֆիլ	- ,, -	109	148	124	82	71
Կաղամբ	- ,, -	84	68	67	36	118
Գազար	- ,, -	...	140	93	150	75
Գլուխ սոխ	- ,, -	...	...	...	200	...
Խնձոր	- ,, -	194	250	...	176	...
Մեղր	- ,, -	2778	2500	2080	2755	2661
Միս տավարի	- ,, -	857	925	942	1076	1135
Միս ոչխարի	- ,, -	1013	959	1030	1102	1215
Միս խոզի	- ,, -	1142	937	960	1423	1468
Կաթ	լ	98	93	99	100	101
Մածուն	- ,, -	168	171	169	175	178
Պանիր (յուղոտ)	կգ	801	730	762	874	879
Չուլ	հատ	38	41	39	42	43
Միամյա խոտեր	կգ	...	20	24	29	25
Բազմամյա խոտեր	- ,, -	40	42	45	30	...

... \_ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

(%)

	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2005թ. մայիսին		2005թ. մայիսին	
	2005թ. ապրիլի նկատմամբ	2004թ. մայիսի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ	2004թ. մայիսի նկատմամբ
<b>ՀՀ, ընդամենը</b>	97.6	104.6	100.6	104.9
<i>այդ թվում</i>				
Արագածոտն	98.1	103.1	100.2	103.0
Արարատ	95.0	105.7	105.2	105.4
Արմավիր	91.1	104.0	100.7	103.2
Գեղարքունիք	97.3	105.6	98.6	104.8
Լոռի	99.9	100.5	102.2	105.8
Կոտայք	99.4	107.5	100.7	112.8
Շիրակ	98.6	98.0	98.0	94.3
Սյունիք	96.3	97.1	100.8	102.7
Վայոց ձոր	94.8	107.8	100.8	105.1
Տավուշ	98.5	103.9	101.6	105.9